

ԻՆՔՆԱԿԵՆ ՄԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ես, Ռուստամ Ռաֆիկի Սահակյանս, ծնվել եմ 1965 թվականի օգոստոսի 1-ին ՀԽՍՀ Կիրովական (այժմ՝ Վանաձոր) քաղաքում:

1982 թվականին ավարտել եմ Կիրովականի Գ. Սունդուկյանի անվան թիվ 8 միջնակարգ դպրոցը գերազանցությամբ և նույն թվականին ընդունվել ԵրՊԻ Կիրովականի մասնաճյուղի «Ավտոմատիկա և հեռուստամեխանիկա» բաժինը:

1983-1985թթ. ծառայել եմ Խորհրդային բանակում:

1989թ. ավարտել եմ ԵրՊԻ Կիրովականի մասնաճյուղի «Ավտոմատիկա և հեռուստամեխանիկա» բաժինը գերազանցությամբ, ստանալով ինժեներ-էլեկտրիկի որակավորում:

1989թ. սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին աշխատել եմ ԵրՊԻ Կիրովականի մասնաճյուղի «Էլեկտրոնիկա և ավտոմատիկա» ամբիոնում լաբորանտ:

1990թ. հունվարին ուղեգրվել եմ Լենինգրադի Ս.Մ. Կիրովի անվան տեքստիլ և թեթև արդյունաբերության ինստիտուտին կից նպատակային ասպիրանտուրա, որն ավարտել եմ 1994 թվականին, պաշտպանել թեկնածուական թեզ «Մինթետիկ թելերի հատկությունների որոշման ուլտրաձայնային մեթոդների մեթոդոլոգիական ապահովման հիմունքների զարգացումը» թեմայով՝ 05.13.16 - Հաշվողական տեխնիկայի, մաթեմատիկական մոդելավորման և մաթեմատիկական մեթոդների կիրառությունը գիտական հետազոտություններում (ըստ գիտությունների ճյուղերի) և 05.19.01 – Նյութաբանություն (տեքստիլ, կաշվե-մորթային, կոշիկի, կարի) մասնագիտությունների գծով:

1994 թվականին ինձ շնորհվել է տեխնիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

1996թ. օգոստոսին վերադարձել եմ Հայաստան, Վանաձոր: 1996թ. սեպտեմբերից մինչև 1999թ. հուլիս աշխատել եմ Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի Վանաձորի կրթահամալիրի «Կառավարման համակարգեր» սեկտորում ավագ դասախոս: Վերոհիշյալ սեկտորում աշխատանքի ընթացքում նախապատրաստել եմ «Ավտոմատիզացման համակարգերի մոդելավորում», «Տեքստիլ և թեթև արդյունաբերության հսկող-չափող սարքեր», «Փորձերի պլանավորում», «Ճյուղի էկոնոմիկա», «Արտադրության կազմակերպում, կառավարում և պլանավորում» առարկաների դասախոսությունները, վարել եմ ուսումնական պարապմունքների բոլոր ձևերը:

1997թ. հունվարին գործընկերների հետ համատեղ Վանաձորում հիմնադրել և ղեկավարել եմ «Կոմպյուտեր Սերվիս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, որի գործունեության հիմնական նպատակը եղել է համակարգչային գրագիտության ուսուցման կազմակերպումն ու անցկացումը: Նույն թվականին «Կոմպյուտեր Սերվիս» ՍՊԸ-ին կից իմ նախաձեռնությամբ կազմակերպվել է «Բիզնես դպրոց», որն իրականացրել է բիզնես-կրթական ծրագրեր:

1999թ. օգոստոսին հրավիրվել եմ ՌԴ Ամուրի մարզի Բլագովեշչենսկ քաղաքի Ամուրի պետական համալսարան (ԱմՊՀ), որտեղ ընդունվել եմ ԱմՊՀ-ի առկա դոկտորանտուրան: Այն ավարտել եմ 2002 թվականին՝ Սանկտ-Պետերբուրգի պետական համալսարանում պաշտպանելով դոկտորական թեզ՝ «Բարդ ձևակերպելի անընդհատ տեխնոլոգիական խնդիրների համակարգային վերլուծություն» թեմայով, 05.13.01 - «Համակարգային վերլուծություն, կառավարում և ինֆորմացիայի մշակում (կիրառական մաթեմատիկա և կառավարման գործընթացներ)» մասնագիտությամբ:

2003թ. մայիսին ինձ շնորհվել է տեխնիկական գիտությունների դոկտորի գիտական աստիճան:

2002 թվականին ՌԴ ԲՈԿ-ի կողմից ինձ շնորհվել է դոցենտի գիտական կոչում, իսկ 2006 թվականին՝ մաթեմատիկական անալիզի և մոդելավորման ամբիոնի պրոֆեսորի գիտական կոչում:

1999-2006թթ. աշխատել եմ ԱմՊՀ-ի «Մաթեմատիկական անալիզ և մոդելավորում» ամբիոնում դոցենտի, այնուհետև՝ պրոֆեսորի պաշտոններում:

ԱմՊՀ-ում աշխատանքի տարիներին ուսումնասիրել և նախապատրաստել եմ «Սովորական դիֆերենցիալ հավասարումների լուծման թվային մեթոդները» առարկայի դասախոսությունը:

Մշակել և ուսումնական գործընթացի մեջ ներդրել եմ «Ճկուն թելի դիմամիկայի մոդելավորումը բարձրհաճախականային բազմահիմք փորձնական սարքի օգնությամբ» կիրառական ծրագիրը (ԷՀՄ-երի համար ծրագրերի պաշտոնական գրանցման վկայական թիվ 2001610167 – Պատենտների Ռուսաստանյան գործակալություն, ՌԴ, 2001թ.), անց եմ կացրել ուսումնական պարապմունքների բոլոր ձևերը, իրականացրել ուսանողների կուրսային, դիպլոմային, ինչպես նաև գիտահետազոտական աշխատանքների ղեկավարում, հանդիսացել եմ ասպիրանտների գիտական ղեկավար: Հանդիսացել եմ ԱմՊՀ-ի Գիտական խորհրդի անդամ, ինչպես նաև ԱմՊՀ-ի Գիտատեխնիկական խորհրդի անդամ:

2002-2006 թվականներին զբաղեցրել եմ ԱմՊՀ-ի Գիտահետազոտական աշխատանքների և նորարարությունների վարչության պետի պաշտոնը:

2003-2006 թվականներին ՌԴ կրթության նախարարության առաջադրանքով եղել եմ թիվ 1.4.05՝ «Բարդ ձևակերպելի տեխնոլոգիական գործընթացների համակարգային վերլուծություն և կառավարում. ճանաչողական, կանխագուշակման և դասակարգման խնդիրների մոդելների և ալգորիթմների մշակում» գիտական թեմայի ղեկավարը (գրանցման թիվ 01200503817):

1999-2006 թվականներին մշակել, հաղթել և իրականացրել եմ ՌԴ Ամուրի մարզում բիզնես կրթության, ինչպես նաև փոքր և միջին բիզնեսի զարգացման ուղղությամբ միջազգային գրանտներ, հետևյալ ծրագրերով.

Ժամկետ	Նախագծի անվանումը/Պաշտոնը
1999-2002	Ռուս-Ամերիկյան նախագիծ. «Միսիսսիպի նահանգի միջազգային զարգացման Կոնսորցիումի /Ջեքսոն քաղաքի պետական համալսարանի և Ամուրի պետական համալսարանի գործընկերություն» (<i>NIS College and University Partnership Program, Grant No. IA-ASJL-G8190272</i>)/ Համակարգող
2003-2004	Ռուս-Ամերիկյան նախագիծ. «ՌԴ Ամուրի մարզի փոքր բիզնեսի աջակցություն» / ԱՄՆ Միսիսսիպի նահանգի միջազգային զարգացման Կոնսորցիումի և Ամուրի պետական համալսարանի միջև (<i>Ծրագիր FRAEC «ՌԴ Հեռավոր Արևելք – ԱՄՆ. ակտիվ համագործակցություն, նախագիծ թիվ PG2-US-E-154</i>)/ Ղեկավար
2004-2005	Ռուս-Ամերիկյան նախագիծ. «Միկրոֆինանսավորման մոդելի փոխանցման նախագիծ» / ԱՄՆ «Քաունթերփարթ Բիզնես հիմնադրամ» Փոքր ձեռնարկատիրության աջակցության հիմնադրամի» և Ամուրի պետական համալսարանի միջև (<i>Ծրագիր FRAEC «ՌԴ Հեռավոր Արևելք – ԱՄՆ. ակտիվ համագործակցություն, նախագիծ թիվ PG4-RF-R-435</i>)/ Ղեկավար
2005-2006	Ռուս-Բրիտանական նախագիծ. «Բրիտանական կրթությունը Ռուսաստանում (BRIDGE)» / Մեծ Բրիտանիայի Լիդս Մետրոպոլիտեն համալսարանի և Ամուրի պետական համալսարանի միջև / Ղեկավար

Գրանտների շրջանակներում հիմնադրել են ԱմՂՀ-ին կից «Բիզնես դպրոցը», որի գոծունեության շրջանակներում 2001 թվականին, առաջինը ՌԴ Հեռավոր Արևելքում, ամերիկյան կողմի հետ համատեղ իրականացվել է «MBA – Բիզնես կառավարման մագիստրոս», իսկ 2005 թվականին՝ բրիտանական կողմի հետ համատեղ՝ «Միջազգային բիզնեսի կառավարում» ծրագրերով ուսուցում: 2003 թվականին ամերիկյան կողմի հետ համատեղ, իմ նախաձեռնությամբ, ԱմՂՀ-ին կից հիմնադրվել է «Փոքր բիզնեսի զարգացման և նորարարությունների կենտրոն – ԲԻԶՆԵՍ ԻՆՎՈՒԲԱՏՈՐ»՝ առաջիններից մեկը ՌԴ-ում:

2004-2006 թվականներին ընտրվել են ՌԴ Ամուրի մարզի Բլագովեշչենսկ քաղաքի սոցիալ-տնտեսական զարգացման հիմնադրամի կառավարման խորհրդի նախագահ:

Անցել են հետևյալ մասնագիտական վերապատրաստումները.

2000թ. - «Կառավարման գործունեության վերահսկողություն» ծրագրով, Տոկիո, Ճապոնիա,

2001թ. - «Բիզնեսի կառավարման մագիստրոս /MBA/» ծրագրով, Ջեքսոն, ԱՄՆ,

2003թ. - «Փոքր բիզնեսի զարգացում և աջակցություն» ծրագրով, Ջեքսոն, ԱՄՆ,

2004թ. - «Գործարար ադմինիստրացիայի մագիստր /MBA/» ծրագրով, Լիդս, Մեծ Բրիտանիա,

2006թ. - «Միջազգային բիզնեսի կառավարում» ծրագրով, Լիդս, Մեծ Բրիտանիա:

2005-2006թթ. - «Պետական և համայնքային կառավարում» ծրագրով, Բլագովեշչենսկ, ՌԴ:

2004 թվականին ստացել են երկրորդ բարձրագույն կրթություն՝ «Ֆինանսներ և վարկեր» մասնագիտությամբ, տնտեսագետի որակավորմամբ:

2005-2006թթ. - անցել են ուսուցում «Թրեյներների և բիզնես խորհրդատուների պատրաստում» ծրագրով, («Արտաքին առևտրի և ներդրումների աջակցության «ՊՐՈԳ-ՆՈՋ» կենտրոնի» (ՌԴ, Բլագովեշչենսկ) և ԱՄՆ-ի Ալյասկայի Համալսարանի (Անկորիջ, ԱՄՆ) համատեղ կազմակերպված):

ԱմՂՀ-ի և ռուսական ու արտասահմանյան գործընկերների հետ համագործակցության ծրագրերի հստակ և որակյալ կազմակերպման համար պարզևատրվել են ԱմՂՀ-ի կողմից:

2006թ. օգոստոսին հրավիրվել են Ռուսաստանի պետական սոցիալական համալսարանի (ՌՊՍՀ) Անապայի մասնաճյուղ՝ որտեղ 2006թ.- ից մինչև 2013թ. աշխատել են «Ինֆորմացիոն տեխնոլոգիաների, տնտեսագիտության և իրավունքի» ֆակուլտետի դեկանի պաշտոնում, իսկ 2006-2016թթ.՝ նույն համալսարանի ինֆորմատիկայի և մաթեմատիկայի ամբիոնի պրոֆեսոր:

ՌՊՍՀ-ի Անապայի մասնաճյուղում աշխատանքի ընթացքում եղել են «Կիրառական մաթեմատիկա և ինֆորմատիկա» ուղղությամբ մագիստրոսական ծրագրի ղեկավար, նախապատրաստել են «Արհեստական բանականության համակարգեր», «Ներդրանքներ և ներդրողական կարգիչներ», «Համակարգչային մոդելավորում» և «Ավտոմատացված համակարգերի տեսական հիմունքներ» առարկաների դասախոսությունները:

Մշակել և ուսումնական գործընթացի մեջ ներդրել են «Բազմաչափ տվյալների ավտոմատ դասակարգում և դինամիկ վիզուալացում» (ԷՀՄ-երի համար ծրագրերի պաշտոնական գրանցման վկայականներ թթ. 2010612788, 2010612789, 2011616265, 2011617626 – Պատենտների Ռուսաստանյան գործակալություն, ՌԴ, 2009-2011թ.) կիրառական ծրագրերի փաթեթը:

2009-2011թթ. հանդիսացել են «Մարգային կրթական միջավայրի տեղեկատվական համակարգի մոդելի մշակում դինամիկ ծրագրավորման օգնությամբ» գիտական թեմայի ղեկավար՝ «Բարձրագույն դպրոցի գիտական ներուժի զարգացում» գերատեսչական նպատակային ծրագրերի իրականացման շրջանակներում:

2010թ. անցել են վերաորակավորման դասընթացներ «Որակի կառավարման համակարգեր» ծրագրով ՌԴ, Յարուլավլ քաղաքում:

2011-2012թթ. անցել են մասնագիտական վերապատրաստում «Սոցիալական ոլորտի մենեջեր» ծրագրով:

2007թ. հիմնադրել և ղեկավարել են «Միջազգային բիզնես դպրոց» ՍՊ ընկերությունը, որի գործունեության հիմնական ուղղություններն են ընդհանուր բիզնես-կրթությունը, ավտոմատացված տեղեկատվական համակարգերի նախագծումը ըստ ոլորտների և համակարգված SS-խնդիրների ներդրումը բիզնեսում:

2008թ. հոկտեմբերին ընտրվել են ՌԴ Ա.Մ. Պրոխորովի անվան Ինժեներական գիտությունների ակադեմիայի իսկական անդամ (ակադեմիկոս):

2008-2016թթ. հանդիսացել են ՌԴ Անապայի քաղաքապետին կից Կրթական խորհրդի անդամ:

2016թ. դեկտեմբերին հրավիրվել են Կրասնոդարի «Մարգերինգի և սոցիալ-տեղեկատվական տեխնոլոգիաների Ակադեմիա» (ՌԴ, ք. Կրասնոդար) «Մաթեմատիկայի և հաշվիչ տեխնիկայի» ամբիոնի պրոֆեսորի պաշտոնին: 2019թ. փետրվարին ընտրվել են նույն բուհի «Մաթեմատիկայի և հաշվիչ տեխնիկայի» ամբիոնի վարիչ, ուր աշխատում են մինչ օրս:

Հանդիսանում են «Ինֆորմատիկա և հաշվիչ տեխնիկա» ուղղությամբ մագիստրոսական ծրագրի ղեկավար: Ուսումնասիրել և նախապատրաստել են «Մեծ տվյալների բանական վերլուծություն և մեքենայական ուսուցում», «Ներքո ոչ հստակ համակարգեր» առարկաների դասախոսությունները:

Հանդիսանում են «Բարդ ձևակերպելի տեխնոլոգիական գործընթացների համակարգային վերլուծություն և կառավարում. ճանաչողական, կանխագուշակման և դասակարգման խնդիրների մոդելների և ալգորիթմների մշակում» գիտական թեմայի ղեկավար:

Գիտական թեմայի հետազոտությունների հիմնական ուղղություններն են.

- 1) Համակարգային վերլուծության փուլերի ավտոմատացումը ոչ ֆորմալ մեթոդների հիման վրա,
- 2) Որոշումների կայացման աջակցության ինֆորմացիոն համակարգերի մշակումը դինամիկ ոչ հստակ գիտելիքների բազայի հիման վրա,
- 3) Բազմաչափ տվյալների դինամիկ վիզուալացում և ավտոմատ դասակարգումը կառավարման համակարգերում տվյալների փոխակերպման խնդիրների լուծման ժամանակ,
- 4) Բարդ տնտեսական համակարգի հետազոտությունների համակարգային վերլուծության տեղեկատվական համակարգերի մշակում:

Գիտական հետաքրքրությունների շրջանակ

Համակարգային վերլուծություն, արհեստական բանականություն, արհեստական ներշնչային ցանցեր, ոչ հստակ տրամաբանություն, պատկերների ճանաչման մաթեմատիկական մեթոդներ:

Մասնագիտական հետաքրքրությունների շրջանակ

Բիզնես կրթություն, փոքր բիզնեսի խորհրդատվություն, բիզնես-կառավարում, հակաճգնաժամային կառավարում:

Հանդիսանում եմ հետևյալ StartUp նախագծերի ղեկավար.

- 1) Սննդի պատվերների և առաքման միասնական համակարգ «EATonline»/
<http://eatonline.ru/>
- 2) Սրճարանների և ռեստորանների սննդի առաքիչների ծառայություն
«KENGURU»/ <https://ks-kenguru.ru>

Անց եմ կացրել հետևյալ թրեյնինգները.

- 1) Together4Armenia (www.together4armenia.am) նախագծի շրջանակներում Հայաստանի Հանրապետության մարզերում բաց դասախոսություններ՝ «Արհեստական բանականության համակարգեր», «Ներդրացանցեր և ներդրող համակարգիչներ» թեմաներով:
- 2) ՌԴ մարզերում («Էֆեկտիվ վաճառքներ», «Առարկությունների և դիմադրությունների հետ աշխատանք», «Վեճերի կարգավորում», «Անձնակազմի էֆեկտիվ կառավարում», «Էֆեկտիվ բանակցություններ» թեմաներով:

Լեզուների իմացություն

Հայերեն – կատարյալ, ռուսերեն – կատարյալ, անգլերեն – միջին:

Արժանացել եմ հետևյալ պարգևների.

- 1) 2010թ. - Կայսրուհի Մարիա Ֆեոդորովնայի անվան արծաթե մեդալ՝ «Սոցիալական ծառայությունների համար», Ռուսաստանի պետական սոցիալական համալսարանի կողմից:
- 2) 2015թ. - «Ինժեներական գիտությունների զարգացման գործում ներդրման համար» մեդալ՝ ՌԴ Ա. Պրոխորովի անվան ինժեներական գիտությունների ակադեմիայի կողմից:
- 3) 2015թ. - Պետրոս Մեծի անվան «Սոցիալական կրթության ոլորտում նվաճումների համար» արծաթե պատվո նշան՝ Ռուսաստանի պետական սոցիալական համալսարանի կողմից:

Գիտա-մեթոդական հրապարակումների ցանկը ներառում է թվով 10 գիտա-մեթոդական աշխատանքներ, թվով 1 մենագրություն, թվով 17 ԷՀՄ-երի համար պաշտոնական գրանցման վկայական (ՌԴ Պատենտների գրանցման գործակալություն), ընդամենը՝ թվով 143 հրապարակում:

Ընտանեկան դրություն.

Ամուսնացած եմ: Կինս՝ Իրինա Ալեքսանդրի Շպեխտ – տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ: Աշխատում է ՌԴ Կրասնոդարի երկրամասի Կրասնոդարի «Մարզերինգի և սոցիալ-տեխնեկատվական տեխնոլոգիաների Ակադեմիայի» մաթեմատիկայի և հաշվիչ տեխնիկայի ամբիոնում դոցենտ:

Ունեմ երկու զավակ:

Որդիս՝ Վիլյամ Ռուստամի Սահակյան, ծնվ. 1994 թվականին,

2018-ին գերազանցությամբ ավարտել է Մ. Լոմոնոսովի անվան ՄՊՀ-ի մեխանիկա-մաթեմատիկական ֆակուլտետը «Հիմնարար մաթեմատիկա» մասնագիտությամբ,

աշխատում է ՌԴ Մոսկվա քաղաքի ՏՏ ոլորտի կազմակերպությունում առաջատար մասնագետ:

Դուստրս` Ալվինա Ռուստամի Սահակյան, ծնվ. 1997 թվականին, 2018-ին գերազանցությամբ ավարտել է ՀՀ Երևանի Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարանի «Միջազգային հարաբերություններ» բաժինը, բակալավր: Ներկայումս ուսանում է Հայաստանի Ամերիկյան համալսարանի մագիստրատուրայում:

Հայցորդ

Ռ. ՄԱՀԱԿՅԱՆ

« ___ » _____ 2020թ.

ք. Վանաձոր